ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1949 ՄԱՅԻՍ – ՅՈՒՆԻՍ Թիւ 5-6

ԷՋ

ԿՐՕՆԱԿԱՆ

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ. – Նոր յայտնութիւն թէ սխալ մեկնութիւն (շար.) . . . 97

ԳՐԱԿԱՆ

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՃԵԱՆ. – Սրբուհի Տիւսաբ . 102

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. – Աղուոր ծունկս . . . 111

Հ. Գ. ՏԱՅԵԱՆ. – Գիւանական նօթեր Բագրատունեան «Հայկ Գիւցազն»ի մասին . 111

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՃԵԱՆ. – Փօլ Վալերի և իր բանաստեղծութիւնը (վերջ) . . . 124

ԱՐՄԱՒԻՐԵԱՆ. – Անդարձ մեկնում . . . 134

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ. – Մայրիկ . . . 135

Հ. ԵՓՐԵՄ ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ. – Խաչեալը . . 142

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հ. ԳՐ. ՍԱՐԳՍԵԱՆ. – Գրիգոր կԹղ. Անաւարզեցի, Նամականեր (շար.) 116

» » Ա. Մաշտոցը . . . 114

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ. – Ակամայ պատասխան Յ. Քիւրտեանին 113

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ց. ԱՇՐԱՖԵԱՆ. – Համայնապատկեր շարժանկարի պատմութեան (վերջ) 136

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Հ. Մ. ՃԱՆԱՃԵԱՆ. – Ուիլիամ Սարոյեան Ս. Ղազարի մէջ 143

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ. – Մխիթար Աբբահօր մահուան Բ. Դարադարձի բացման հանդէսները 147

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՆԵՐ . . . 154

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԷՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ. – Ն. Վ. Տ. Ծիր. Աղաճանեանի Նոր Հովուական Թուղթը . 163

Ց. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ. – Արամ Երեմեանի «Քանդակագործուհի Այէզմիկ Ուրարտու» . . 164

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՃԵԱՆ. – Ահարոն Տատուրեանի «Սօսեաց անտառ»ը 166

ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

Հ. ՔԵՐՈԲԷ Վ. ՋՐԱՖԵԱՆ. – Հանգիստ հոգւոյ Հ. Գէորգ Վ. Ոսկեանի . . . 167

SOMMAIRE

1949 Mai – Juin N. 5-6

PAGE

RELIGION

P. Nersès Der-Nersessian. – Révélation nouvelle ou bien interprétation erronée ? (suite) 97

LITTÉRATURE

P. Mesrob Djanachian. – Serpouhi Dussap . 102

Arsène Yergath. – A ma belle plante ! . 111

P. L. Dayan – Notices d'archives sur le poème «Haïg le héros» de Pagratouni 111

P. Mesrop Djanachian. – Paul Valéry et sa poésie (fin) 124

Armavirian. – Départ sans retour . . 134

Arsène Jergath. – Ma mère . . . 135

P. E. Der-Ghazarian. – Le crucifié . . 142

PHILOLOGIE

P. Grégoire Sarkissian. – Grégoire d'Anazarba, écrivain (suite) . . . 116

» » Ier Machtotz . 114

Aram Jérémian. – Réponse forcée à Mr. H. Kurdian 113

BEAUX ARTS

J. Achrafian. – Panorama de l'histoire du cinéma (fin) 136

ECHO ARMÉNIEN

P. M Djanachian. – William Saroyan à St. Lazare 143

P. N. Der-Nersessian, – Solennités jubilaires de Bi-Centenaire de la mort de l'Abbé Mékhitar 147

DISCOURS 154

RECENSION

P. Nersès Der-Nersessian. – La nouvelle lettre pastorale de S. Em. le Card. Agagianian 163

H. Kouyoumdjian. – La «Sculpteur Ayzemnik Ourardou» de Mr. Aram Yérémian . 164

P. M. Djanachian. – La «Forêt des platanes» de Mr. Aharon Dadourian . 166

NECROLOGIE

P. Chérubin Teherakian. – La mort du P. Georges Oskian 167

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ – ԳԻՏԱԿԱՆ – ԲԱՐՈՅԱԿԱՆ

1843 – 1949 ՄԱՅԻՍ – ՅՈՒՆԻՍ

107-ՐԴ ՏԱՐԻ Թիւ 5 – 6

ՆՈՐ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ԹԷ ՍԽԱԼ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

(ՊԱՏԱՍԽԱՆ ԳԵՐՇ. ՓԱՌԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ)

(Շար. տես «Բազմ.» 1949, թ. 3-4 էջ 77)

Բ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՍԱՅԹԱԲՈՒՄՆԵՐ

Ինչպէս նկատեցինք, բանասիրական մեթոտի թերին էր որ զուրս կը ցայտէր Գերշ. Հեղինակի ուսումնասիրութեան մէջ։ Ներկայացուցինք մէկ պարագան. սակայն մէկ քանի կէտեր ալ կ'ուզենք անդրադարձնել, այս ներածական տեսութիւնը լրացնելու համար։

1.

Գերշ. Փառէն Եպս. ակնարկելով իր տուած ծանօթութիւններու գիտական հանգամանքին, կը պարծի յիշատակած ըլլալով «Ս. Գրքի և Հեղինակներու գործերուն զլուխներն ու համարները, գրքերու և պարբերաթերթերու տարին, թիւն ու էջերը, – առանց կանխակալ միտքի կամ նախապաշարումի (ինչպէս սովոր են ընել ուրիշները) և առանց ո՛և է խտրական կամ նախատական նպատակի» [20]։

Այս հանդիսաւոր յայտարարութենէն առաջ, արդեօք ակնարկ մը տուած էր իր իսկ գրած ու հրատարակած յօդուածներուն։ Ահա թէ ինչո՛ւ կը տարակուսինք։

Իր ուսումնասիրութեան 5-րդ յօդուածին մէջ, որոշակի յայտարարելով թէ վերջին դատաստանէն զատ ո՛և է դատաստան գոյութիւն չունի, կ'ըսէ.

«Այսպէս քարոզեցին Քրիստոսի Առաքեալները, և այսպէս ուսուցին և աւանդեցին դարերու ընթացքին, Արեւելեան և Արեւմտեան ուղղափառ Եկեղեցիներու և՝ մեր Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ առաքելաշաւիղ Ս. Հայրապետները». ապա Յոյն և Լատին Հայրեր յիշատակելէ վերջ կը շարունակէ. «և մեր Ս. Գր. Լուսաւորիչ, Ս. Սահակ, Ս. Գ. Նարեկացի, և Ս. Ն. Շնորհալի, եւայլն, եւայլն» [21]։

(20) Հատ, 1948. թ. 4, էջ 96.
(21) Հատ, 1945. թ. 8-10, էջ 158.

digitised by A.R.A.R.@